ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Աշխատանքի և աշխատավորների համերաշխության միջազգային օրվա առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Մայիսի 1-ի՝ Աշխատանքի և աշխատավորների միջազգային օրվա կապակցությամբ:

Աշխատանքը եղել և մնում է հասարակության զարգացման, բարեկեցության ամրապնդման և արժանապատիվ կյանքի գլխավոր գրավականը: Մեր ժողովրդի ստեղծարար ոգին, աշխատասիրությունն ու նպատակասլացությունը միշտ եղել են հաջողությունների հիմքում:

Գեղարքունիքի մարզի հարգարժան բնակիչները՝ գյուղացին, ուսուցիչը, բժիշկը, շինարարը, ծառայողը, գործարարը և յուրաքանչյուր նվիրյալ աշխատող, իրենց ամենօրյա պատասխանատու աշխատանքով կարևոր ներդրում ունեն մարզի ու պետության զարգացման գործում:

Այս խորհրդանշական օրը երախտագիտությամբ խոնարհվում ենք բոլոր նրանց առջև, ովքեր իրենց քրտնաջան աշխատանքով ստեղծում և պահպանում են մեր հասարակության արժեքները:

Թող յուրաքանչյուր աշխատանք պսակվի հաջողությամբ, յուրաքանչյուր ընտանիք ապրի բարեկեցությամբ, իսկ մեր մարզը շարունակի զարգանալ համատեղ աշխատանքի ու միասնական ջանքերի շնորհիվ:

Մաղթում եմ ձեզ առողջություն, խաղաղություն և նոր ձեռքբերումներ:

Շնորհավոր տոնդ, աշխատավոր հայ մարդ: